

Հասարակական կեցույթյան նոր պայմաններում աստիճանաբար փոխվում են նրանց հասարակակամ գիտակցության ձևերը, նիստն ու կացը, սովորույթները, խոսվածքն ու ավանդական բանահյուսու-թյունը:

2. Անվերադարձ կորստից փրկելու նպատակով, վերջին տասնամյակում /պաշտոնապես՝ վերջին երեք տարում/, զրի ենք առել պատմա-ազգագրական բնույթի նյութեր՝ Մուսալեռից, Արաբկիրից, Մարաշից, Կեսարիայից, Էվերեկից, Խարբերդից, Երզնկայից, Աեքաստի-յից, Դիարբեքրից, Ադաբազարից, Պոլսից և այլ վայրերից զաղթած հայերից:

Նյութերը զրի են առնված Երևանում ու շրջակա թաղամասե-րում/Շահումյան, Ջեյթուն, Արաբկիր, Թոխմախ-գյուլ/, ինչպես նաև Էջմիածնում, Հոկտեմբերյանում և այլ վայրերում բնակվող մեծա-հասակ հայրենադարձներից:

3. Բանահյուսական նյութերը զրանցված են բարբառագիտական սկզբունքներով, որոշ մեղեդիներ նոտագրված են:

4. Հավաքած նյութերի մեջ կան վիպական ու քնարակա ընդ-թի ստեղծագործություններ: Հրաշապատում և իրապատում հեքիաթնե-րում գովերգվում են խելքը, արհեստը, ուսումը և մարդկային առաքինությունները:

5. Հայրենադարձներն ու նեն ինքնատիպ, պատկերավոր ու խորիմաստ առած-ասացվածքներ, օրհնանքներ ու հանելուկներ, որոնք զաղափար են տալիս նրանց ապրած երկրների բնական, աշխարհագրա-կան միջավայրի, կենցաղի ու սովորույթյունների մասին:

6. Հայրենադարձների հոգևոր մշակույթն իր բազմազանու-թյամբ ու ինքնատիպությամբ համահնչյուն է հայ ժողովրդի արև-մտահայ հառվածի պատմական մակատառին:

Ա.Ա.ՂԱԶԻՅԱՆ

ԶԱՌԱՄՅԱՆ ՄԵԾԱՀԱՄԱԿՆԵՐԻ, ԿԱՄԱՎՈՐ ՄԱՀՎԱՆ, ՍՈՎՈՐՈՒՅԹԻ
ՎԵՐԱՊՐՈՒԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱԽՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԸ ԸՍՏ ՀԱՅ
ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ

Հայ ժողովրդական բանահյուսու-թյունը բավականապես տվյալներ է ընձեռում զառամյալ մեծահասակների, կամավոր մահվան, սովոր-

րույթի վերադարձնելու և դրանց վերադարձնելու միջոցով վերադարձնելու և նյութերը տարածված են Հայաստանի հիմնական պատմա-ազգագրական շրջաններում:

Ավանդական գրույթների մի շարք՝ հիշյալ սովորույթը ներկայացնում է իբրև վաղուց ի վեր հաստատված իրողություն, որը սակայն վերացվում է հոգեկան, անձնական-անհատական գործոնի ազդեցությամբ/որդին հոր անհարկից հասկանում է, որ իրեն էլ նույն ապագան է սպասում/:

Սովորույթի վերացումը մի խումբ հեքիաթներում պատմության մեջ է մեծահասակների փորձի ու իմացության անհրաժեշտություն /հայրն իր գաղափարներից խելացի խորհուրդներ է տալիս որդուն, որը փրկում է երկիրը/:

Խնդրո առարկա սովորույթը հասարակական զարգացման ու ընթանական ազգակցական կապերին զուգահեռ վերանում է, վերադարձնելու միաժողովում են ներընթանական փոխադարձությունների հետ և ստանում զուտ քարոյա-խրատական գույնավորում /մեծահասակ հորը, երբեմն նաև մորը չհարգող - չհնազանդվողը պատժվում է թե նյութապես, թե քարոյապես/:

Ժ. Կ. ԽԱՀԱՏՐԹԱՆ

ԴԻՎԱԶԱՐՈՒԹՅԱՆ ԴԱՐՄԱՆՈՒՄԸ ՊԱՐՈՎ՝, ԽԱՀԱՏԱՎ,,

Հավատալիքների մեջ շատ լայն տարածում է ունեցել դիվա-հարությունը և նրա դարմանման ժողովրդական տարբեր միջոցները

Դիվահարությունը կապվում է հոգու պաշտամունքի և ոգիների՝ հիվանդություններ ու մահ պատճառելու, կարողություն, հետ, որը գալիս է անիմիստական ըմբռնումների ձևավորման ժամանակներից: Ըստ այդ մտածելակերպի, բոլոր հիվանդները համարվում են շարքերի կողմից բռնվածներ, այսինքն դիվահարներ:

Դիվահարությունն ունեցել է որոշակի ակտանիշներ և բուժման տարբեր եղանակներ: Դիվահարության դարմանման եղանակի մի տարբերակ պահպանվել է Հայաստանի պատմա-ազգագրական մի շարք շրջաններում: Հայ գեղարվեստական և ազգագրական գրականու-